

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ ՎԱՉԱԳԱՆԻ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԿՏԵՐԻ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԺԲ.00.06. «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МКРТЧЯН МГЕР ВАЧАГАНОВИЧ

**ОСОБЕННОСТИ ПРАВОСУДНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ
МЕЖДУНАРОДНЫХ УГОЛОВНЫХ СУДОВ И
ПРЕЦЕДЕНТНОЕ ЗНАЧЕНИЕ ИХ АКТОВ**

АВТОРЕФЕРАТ

**Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.06 – “Международное право”**

Ереван - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ա. Մոխսեև

իրավ. գիտ. թեկնածու Ա. Է. Դիլանյան

Առաջատար կազմակերպություն՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան:

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. ապրիլի 25-ին, ժամը 11⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մարտի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավաբանական գիտ. թեկնածու

Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:

доктор юрид. наук,
профессор В.А. Оганесян

Официальные оппоненты:

доктор юрид. наук,
профессор А.А. Моисеев
канд. юрид. наук А. Э. Диланян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 25 апреля 2015 г. в 11.00 часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукиана 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 24-го марта 2015 г.

Ученый секретарь Специализированного совета,
кандидат юридических наук

А. А. Манасян

I. ԱՏԵՆԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Թեմայի արդիականությունը: 1998թ. հուլիսի 17-ին պետությունների լիազոր ներկայացուցիչները Հռոմում ստորագրեցին մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը: Այս իրադարձությունը դարակազմիկ նշանակություն ունեցավ միջազգային քրեական իրավունքի և - միջազգային քրեական արդարադատության առաջադիմական զարգացման գործում: Պատմության մեջ առաջին անգամ պետությունների լայն փոխհամաձայնության արդյունքում ստեղծվեց մշտական հիմունքներով գործող միջազգային դատական մարմին, որը կոչված է միջազգային մակարդակով քրեական արդարադատություն իրականացնելու միջազգային հանրությանը մտահոգող առավել ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ:

Մինչ Միջազգային քրեական դատարանի ստեղծումը միջազգային պրակտիկայում արդեն առկա էին քրեական արդարադատություն իրականացնող միջազգային դատական մարմինների օրինակներ: Ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված Նյուրնբերգի և Տոկիոյի զինվորական տրիբունալները, այնպես էլ 1990-ական թթ. առաջին կեսին նախկին Հարավսլավիայի Դաշնային Սոցիալիստական Հանրապետության և Ռուանդայի տարածքում կատարված ցեղասպանության, մարդկայնության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունների քննության համար ստեղծված ՄԱԿ-ի ad hoc տրիբունալները կարևոր նշանակություն ունեցան միջազգային քրեական արդարադատության՝ որպես միջազգային իրավունքի ինստիտուտի ձևավորման համար և վերջնական արդյունքում հանգեցրին մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանի ստեղծմանը:

Միջազգային քրեական դատարանի ստեղծման կարևորագույն նպատակը անպատժելիության բացառումն է միջազգային մարդասիրական իրավունքի լրջագույն խախտումներ թույլ տված անձանց նկատմամբ, եթե համապատասխան դեպքերում վերջիններիս նկատմամբ քրեական արդարադատության իրականացումը չի ապահովվում համապատասխան ներպետական դատական ատյաններում:

Ներկայիս պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում վերոհիշյալ միջազգային դատական մարմինների ընթացակարգային գործունեությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունը: Տվյալ մարմիններում առկա ընթացակարգերի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է ընձեռում առավել ամբողջական պատկերացում կազմելու միջազգային քրեական արդարադատության՝ որպես առանձին ինստիտուտի սկզբնավորման և աստիճանական զարգացման, առանձին դատավարական ընթացակարգերի՝ Միջազգային քրեական դատարանի համար հնարավոր նախադեպային նշանակության, պետությունների հետ միջազգային դատական մարմնի ունեցած փոխհարաբերությունների, մեղադրյալի՝ միջազգային-իրավական ակտերով երաշխավորված իրավունքների իրացման առանձնահատկությունների մասին:

Միջազգային քրեական դատարանի ընթացակարգային գործունեությունը կարգավորող նորմերը բազմաթիվ նմանություններ ունեն ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների համապատասխան նորմերի հետ: Այդ նորմերի ուսումնասիրությունը, ինչպես նաև արդեն իսկ կայացված դատական որոշումներում առկա իրավական դիրքորոշումների հետազոտությունը հնարավորություն կընձեռի պատկերացում կազմելու Միջազգային քրեական դատարանում գործող փոխլրացության (կոմպլեմենտարիզմի) սկզբունքի կիրառման առանձնահատկությունն-

ների, միջազգային քրեական արդարադատության նորմերի և անձեռնմխելիությունների վերաբերյալ միջազգային-իրավական նորմերի հարաբերակցության, գործող քրեադատավարական կառուցակարգերի առանձնահատկությունների և դրանցում առկա թերությունների վերաբերյալ: Ներկայիս պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում նաև միջազգային քրեական դատարանների և առաձին պետությունների փոխհարաբերությունները կարգավորող նորմերի ուսումնասիրությունը՝ կապված տվյալ պետությանն ուղղված դատարանի հանձնարարությունների և խնդրանքների կատարման հետ:

Այսպիսով, հետազոտության թեման բավականին արդիական է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով: Տեսական հետաքրքրությունը պայմանավորված է համապատասխան հասկացությունների մշակման և միջազգային քրեական արդարադատության աստիճանական զարգացման վերաբերյալ պատկերացում կազմելու նկատառումներով, իսկ գործնական հետաքրքրությունը պայմանավորված է դատավարական կառուցակարգերում առկա որոշակի թերությունների վերհանման և դրանց հաղթահարման առաջարկների մշակմամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է միջազգային քրեական դատական ատյանների արդարադատական կառուցակարգերի առանձնահատկությունների պարզումը, հիմնական օրինաչափությունների վերհանումը, կոնկրետ դատավարական ինստիտուտների վերլուծությունը՝ տվյալ դատական մարմնի նախադեպային իրավական դիրքորոշումների ներքո:

Հետազոտության նպատակն է նաև պարզել միջազգային արդարադատական մարմինների դատական ակտերի նախադեպային նշանակությունը ինչպես տվյալ դատական մարմնի, այնպես էլ այլ միջազգային արդարադատական մարմինների համար նմանատիպ հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հետևյալ խնդիրների լուծումը՝

- հետազոտել միջազգային մակարդակով քրեական արդարադատության իրականացման աստիճանական զարգացման օրինաչափությունները և - պարզել առավել վաղ ստեղծված դատական մարմինների ունեցած նախադեպային նշանակությունը հետագայում ստեղծված մարմինների համար,
- հետազոտել ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի ստեղծման առանձնահատկությունները և կառուցվածքային օրինաչափությունները,
- ուսումնասիրել տրիբունալներում և Միջազգային քրեական դատարանում արդարադատության իրականացման առանձնահատկությունները՝ կատարելով իրավահամեմատական վերլուծություն և դիտարկելով համապատասխան դատական պրակտիկան,
- վերլուծել Միջազգային քրեական դատարանում փոխլրացչության սկզբունքի առանձին բաղադրիչները, ինչպես նաև միջազգային քրեաարդարադատական նորմերի և պետությունների գլուխների անձեռնմխելիությունների մասին միջազգային-իրավական նորմերի հարաբերակցության հիմնահարցը,
- պարզել նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի դերը և նշանակությունը միջազգային քրեաարդարադատական մարմիններում,

- պարզել միջազգային քրեաարդարադատական մարմինների՝ պետություններին ուղղված խնդրանքների և հանձնարարությունների կատարման առանձնահատկությունները՝ ուսումնասիրելով առանձին պետությունների ներպետական օրենսդրությունը և համապատասխան դատական պրակտիկան:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Միջազգային քրեական դատարանների հիմնադրմանը և գործունեությանն առնչվող գիտական ուսումնասիրությունները երևան են եկել մշակած մարմինների ստեղծմանը և աստիճանական զարգացմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, վերջիններիս ընթացակարգային գործունեությանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությանը վերաբերող աշխատությունները գրականության մեջ սակավ են հանդիպում: Հայրենական իրավագիտության մեջ քննարկվող թեմային որոշակի առնչություն ունեցող միակ աշխատությունը հանդիսանում է Վլադիմիր Հովհաննիսյանի «Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում: Էվոլյուցիան և իմպլեմենտացիայի առանձնահատկությունները» աշխատությունը: Միջազգային քրեական դատական մարմինների պրակտիկայի աճին զուգընթաց արտասահմանյան գրականության մեջ վերջին տարիներին նկատվում է տվյալ մարմիններին առնչվող ուսումնասիրությունների աճի միտում: Հետևաբար, ատենախոսության տեսական հիմք են հանդիսացել հիմնականում արտասահմանյան հեղինակների աշխատությունները: Արտասահմանյան գրականության մեջ քննարկվող թեմային անդրադարձել են Ի. Բլիշենկոն, Ա. Վոլեվոզը, Ս. Գրիցակը, Ի. Կոտլյարովը, Մ. Յուսուպովը, Ի. Լուկաշուկը, Ա. Մեզլակը, Օ. Բալանը, Ա. Կովալյովը, Ն. Կոստենկոն, Ա. Աբաշիժեն, Ու. Շաբսը, Մ. Շերիֆ-Բասիուոնին, Կ. Կալվո-Գոլլերը, Ա. Կասեգեն, Ք. Լամոն-Սթ, Բ. Շիֆը, Ֆ. Ույմոնդոն, Ռ. Քրայերը, Հ. Ֆրիմանը, Դ. Մաքգոլդրիկը, Գ. Բոսսը, Ջ. Ալեքսանդրոպոլսը, Ֆ. Սանդսը, Յ. Աքսարը, Ժ. Դորիան, Ջ. Շտիգենը, Հ. Պետեր Գասերը, Մ. Ռատները, Վ. Ներլիխը, Յ. Գամարան, Ս. Լյուդերը, Գ. Սլյուտերը, Վ. Չալվինսկին, Չ. Վենցին, Ս. Ջապալան, Մ. Նովակը, Պ. Գաետան, Կ. Ամբոսը, Ք. Սաֆերլինզը, Մ. Բոհլանդերը, Մ. Ֆեիրլին և այլք:

Ատենախոսության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվային հիմքը կազմում են Միջազգային քրեական դատարանի, ինչպես նաև ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների կանոնադրությունները և Ընթացակարգի ու ապացուցման կանոնները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև վերոհիշյալ դատական ատյանների կանոնակարգերը, ինչպես նաև Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային զինվորական տրիբունալների կանոնադրությունները: Ուսումնասիրության առարկա են դարձել նաև Սիեռա-Լեոնեի հատուկ դատարանի և Լիբանանի հատուկ տրիբունալի կանոնադրությունները և վերջիններիս հիմնադրման վերաբերյալ համապատասխան միջազգային-իրավական փաստաթղթերը: Ուսումնասիրության առարկա են դարձել նաև Վեոսալի և Սևրի պայմանագրերի համապատասխան դրոյթները քրեական արդարադատության մարմիններ ստեղծելու վերաբերյալ: Աշխատության մեջ վերլուծության առարկա են դարձել նաև հետազոտության թեմային առնչվող ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերը, ինչպես նաև քրեական արդարադատության միջազգային մարմինների հետ համագործակցության վերաբերյալ տարբեր պետությունների ներպետական օրենսդրությունները և առկա պրակտիկան:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական) մեթոդ-

ները: Ելնելով հետազոտության թեմայի առանձնահատկություններից՝ աշխատանքի ընթացքում առավել լայնորեն օգտագործվել է համեմատական-իրավական մեթոդը՝ նպատակ ունենալով համեմատական վերլուծություն կատարել տարբեր դատական մարմինների միջև՝ վերջիններիս նմանություններն ու տարբերությունները պարզելու և առկա թերությունները վերհանելու համար: Այս մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել բացահայտել միջազգային քրեական դատարանների հիմնադրման օրինաչափությունները, գործունեության առանձնահատկությունները, անդրադառնալ նշված մարմիններին և պետությունների փոխհարաբերությունների առանձնահատկություններին, առաջարկել լուծումներ որոշակի դատավարական ընթացակարգերի բարելավման համար:

Առեմախոսության գիտական նորույթ: Հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում անդրադառնալ քրեական արդարադատություն իրականացնող միջազգային դատական մարմինների հիմնադրման, դատավարական գործունեության, պետությունների հետ փոխհարաբերությունների առանձնահատկություններին և առկա թերություններին: Քննարկման առարկա են դառնում ագրեսիայի հանցագործության նկատմամբ Միջազգային քրեական դատարանի իրավագործության իրականացման առանձնահատկությունները և ՄԱԿ-ի կանոնադրության համապատասխան դրույթների բովանդակության հետ վերջինիս համապատասխանությունը: Աշխատությունում հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել Միջազգային քրեական դատարանում գործող փոխլրացչության սկզբունքի առանձնահատկություններին և արվել են առաջարկություններ վերջինիս բարելավման ուղղությամբ:

Քննարկման առարկա են դարձել նաև Վերսալի և Սևրի պայմանագրերի որոշակի դրույթներ՝ դրանցով նախատեսված դատական մարմինների ստեղծման և այդ մարմինների իրավագործության սահմանման մասով:

Վերլուծության են ենթարկվել նաև պետությունների գլուխների անձեռնմխելիությունների վերաբերյալ միջազգային-իրավական նորմերը՝ Միջազգային քրեական դատարանի որոշումների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի լույսի ներքո: Հեղինակն անդրադարձել է նաև միջազգային քրեական դատական մարմինների՝ պետություններին ուղղված որոշումների ներպետական մակարդակում իմպլեմենտացման հարցերին:

Արդյունքում կատարվել են ոչ միայն տեսական եզրահանգումներ, այլև մշակվել են որոշակի դատավարական ինստիտուտների կատարելագործման գործուն առաջարկներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին Հասագայի 1907թ. կոնվենցիայի 3-րդ հոդվածում նշվում է, որ պետությունը «պատասխանատու է իր զինված ուժերի կազմում գտնվող անձանց կողմից կատարված բոլոր գործողությունների համար»: Ի զարգացումն այս իրավադրույթի, գրականության մեջ արդարացիորեն նշվել է, որ սովորական զինվորական հանցագործությունները վերաճում են մարդկայնության դեմ հանցագործության, եթե դրանք կատարվում են նախապես կազմված հրամանների հիման վրա, և այդ պատճառով ձեռք են բերում պետականորեն կազմակերպված բնույթ, ինչպես նաև ունեն մարդկանց գանգվածաբար ունչացնելու նպատակ: Ասվածի համատեքստում ատենախոսը գտնում է, որ Վերսալի 1919թ. և Սևրի 1920թ.

պայմանագրերի համապատասխանաբար 227-րդ և 230-րդ հոդվածներով նախատեսված դրույթները հատուկ միջազգային դատարանների ստեղծման մասին լուծեցին երկու կարևոր խնդիր: Առաջին՝ փորձ արվեց ստեղծել առաջին միջազգային ad hoc հատուկ տրիբունալները՝ նյութական, ժամանակային, տարածքային, անձնական իրավագործությունների սահմանմամբ և օժտված post factum արդարադատություն իրականացնելու իրավունքով, ինչի արդյունքում սկսեց արմատավորվել միջազգային հանցագործությունների համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, որի ապացույցն էին հետագայում ստեղծված ad hoc միջազգային նոր տրիբունալները և 1998թ. հիմնված մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանը: Երկրորդ՝ Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածում նշելով, որ Օսմանյան Կայսրությունը պարտավոր է դաշնակից տերություններին հանձնել այն անձանց, ովքեր պատասխանատվություն են կրում կոտորածների համար, հստակ տարանջատում դրվեց կոտորածների (massacres) մեջ մեղադրվող անձանց պատասխանատվության եղանակի և պատերազմի օրենքների և սովորույթների խախտման մեջ (acts in violation of the laws and customs of war) մեղադրվող անձանց պատասխանատվության եղանակների միջև:

2. Ատենախոսը նաև գտնում է, որ միջազգային հանրության շահերը ներկայացնող Դաշնակից տերությունները, Թուրքիայի կողմից իր իրավագործության ներքո գտնվող անձանց՝ այդ թվում հայերի զանգվածային կոտորածները դիտելով որպես նախապես պլանավորված և հատուկ մշակված հրահանգների միջոցով իրականացրած գործողություններ, ըստ էության, դրանք որակեցին որպես ավելի բարձր հանրային վտանգավորության և աննախադեպ ծավալներով իրականացված հանցագործություններ, քան նկատի ուներ Հաագայի 1907թ. կոնվենցիան:

3. Ատենախոսի կարծիքով՝ ազգային և միջազգային կազմ ունեցող տրիբունալները չեն կարող դասվել միջազգային մակարդակով քրեական արդարադատություն իրականացնող մարմինների շարքին, հատկապես այն դեպքերում, երբ դրանք իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են միայն ազգային քրեական օրենսդրությամբ: Ներկայումս գործող նման դատարանները հիմնականում ստեղծվել են ՄԱԿ-ի և համապատասխան պետության միջև կնքված համաձայնագրով, և չնայած իրենց կազմում ունեն միջազգային պաշտոնյաներ, սակայն այն փաստը, որ նրանց գործունեությունը խարսխված է ներպետական օրենսդրության վրա, հիմք է տալիս պնդելու, որ որևէ դատարան՝ միջազգային մակարդակով քրեական արդարադատություն իրականացնող մարմինների շարքում դասելու համար անհրաժեշտ է ոչ այնքան վերջինիս կառուցվածքային բաղադրիչներում միջազգային պաշտոնատար անձանց առկայությունը, որքան սովյալ դատական ատյանի ընթացակարգային գործունեության կարգավորումը միջազգային-իրավական փաստաթղթերով, դատարանի նյութական իրավագործության հիմքը կազմող արարքների ըստ միջազգային իրավունքի սահմանված լինելը, ինչպես նաև ազգային դատական ատյանների հետ փոխհարաբերությունների հատուկ ընթացակարգ ունենալը:

4. Ատենախոսը գտնում է, որ անհրաժեշտ է վերանայել Հռոմի կանոնադրության դեռևս ուժի մեջ չմտած 15bis հոդվածի համապատասխան դրույթները այնպես, որ Միջազգային քրեական դատարանի կողմից ագրեսիայի հանցագործության նկատմամբ իրավագործության իրականացումը պարտադիր հիմնված լինի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված՝ ագրեսիայի

ակտի առկայությունը փաստող որոշման վրա: Խնդիրը նրանումն է, որ Հռոմի կանոնադրության 8bis հոդվածի համաձայն՝ ազրեսիայի հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն այն անձը, ով իր պաշտոնական դիրքի շնորհիվ ի վիճակի է արդյունավետ վերահսկողություն իրականացնել կամ ուղղորդել պետության քաղաքական կամ ռազմական այն գործողությունները, որոնք կազմում են ազրեսիայի հանցակազմը: Ընդ որում, հանցագործության սուբյեկտ կարող են լինել միայն քաղաքական կամ ռազմական ամենաբարձր պաշտոններ զբաղեցնող անձինք: Հետևաբար, ազրեսիայի հանցագործությունը ենթադրում է տվյալ պետության կողմից ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու միջազգային-իրավական պարտավորության խախտման վկայություն և տվյալ պետության նկատմամբ ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ և 42-րդ հոդվածներով նախատեսված հարկադրական միջոցների կիրառում: Ատենախոսը գտնում է՝ նման կապը ենթադրում է, որ ազրեսիայի հանցագործության դեպքում անհրաժեշտ է նախ հավաստել կոնկրետ պետության կողմից իրականացրած ազրեսիայի առկայության փաստը, որից հետո միայն այդ հաստատված փաստի հիման վրա առաջ քաշել կոնկրետ պատասխանատու անձանց միջազգային քրեական պատասխանատվության հարցը:

5. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 17-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ընդունելիության 4-րդ պայմանը (d ենթակետ), որտեղ օգտագործվում է «գործի բավականաչափ լրջություն» ձևակերպումը, հստակության առումով կարող է տարբեր տարակարծիք մեկնաբանությունների պատճառ հանդիսանալ, ուստի անհրաժեշտ է սահմանել որոշակի չափանիշների շրջանակ, որոնք անհրաժեշտ է կիրառել կախված իրավիճակի կոնկրետ հանգամանքներից: Նման իրավակարգավորումը կսահմանափակի դատախազական հայեցողության շրջանակը: Այս խնդրի լուծումը կարևոր է նաև դատախազի գրասենյակի կողմից հետաքննություն սկսելու կամ չսկսելու որոշման վերաբերյալ շահագրգիռ կողմերին հստակ և պատճառաբանված տեղեկատվություն տրամադրելու համար:

6. Գրականության մեջ գերիշխող կարծիքների, ինչպես նաև դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ փոխլրացչության սկզբունքից բխում է, որ Միջազգային քրեական դատարանը կարող է միջամտել ներպետական դատավարության վարույթին միայն այն դեպքում, երբ վերջինիս ընթացքում առկա մեղադրյալի իրավունքների խախտումները վկայում են նրա նկատմամբ արդարադատություն չիրականացնելու մտադրության մասին: Սակայն կանոնադրության համապատասխան դրույթների վերլուծությունից և արդարադատության շահերից բխում է, որ հարկ է ընդլայնել Միջազգային քրեական դատարանի հնարավորությունները այս հարցում: Ուստի առաջարկվում է կանոնադրության 17-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ պատշաճ կերպով հետաքննություն իրականացնելու պետության անկարողությունը բացառելու նորմը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «...անկարողության առկայությունը բացահայտելու նպատակով դատարանը հաշվի է առնում, թե արդյոք ներպետական դատավարության ընթացքում թույլ չեն տրվել մեղադրյալի՝ միջազգային-իրավական նորմերով ճանաչված դատավարական իրավունքների այնպիսի կոպիտ և սխտեմատիկ խախտումներ, որոնց արդյունքում կայացված դատական ակտը խախտում է արդարադատության բուն էությունը»:

7. Միջազգային քրեական դատարանի պրակտիկայի միատեսակության և իրավական որոշակիության պահպանման համար առավել նպատակահար-

մար է միջանկյալ դատական որոշումների դեմ վերաքննիչ բողոքի ընդունելիությունը որոշելու կարողությամբ օժտել ոչ թե համապատասխան որոշումը կայացրած պալատին, այլ վերաքննիչ պալատին, որը առավել հաջողությամբ կարող է համապատասխան հանգամանքներում որոշել կանոնադրության 82-րդ հոդվածի 1-ին կետի d) ենթակետի դրույթների առկայությունը և իր հեղինակավոր մեկնաբանությունների միջոցով ձևավորել կայուն պրակտիկա: Նման իրավակարգավորումը կնպաստի դատարանի միջանկյալ դատական որոշումների քննության արդյունքում կանոնադրության և ընթացակարգի ու ապացուցման կանոնների ոչ միանշանակ ընկալվող դրույթների վերաբերյալ վերաքննիչ բաժանմունքի հեղինակավոր իրավական դիրքորոշումների ի հայտ գալուն և դատարանի նախադեպային իրավունքի զարգացմանը:

8. Թեև դատական նախադեպը ուղղակիորեն չի հանդիսանում իրավունքի աղբյուր Միջազգային քրեական դատարանում, սակայն իրավական որոշակիության և կայունության պահանջներից ելնելով՝ տրամաբանական չի լինի, որ դատարանը որոշակի գործերով իրավական նորմերն ու սկզբունքները մեկնաբանի և կիրառի այլ կերպ, քան կիրառել էր իր նախորդ որոշումներում, եթե այդպես վարվելու համար ծանրակշիռ հիմքեր չկան: Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների որոշումների՝ Միջազգային քրեական դատարանի համար նախադեպային նշանակությանը, ապա վերջինս ուղղակիորեն չի կարող հենվել տրիբունալների նախադեպերի վրա, բայց, որոշակի հարցի վերաբերյալ տրիբունալների վերաքննիչ պալատի իրավական դիրքորոշումները կարող են դատարանում նույն հարցի քննարկման ժամանակ հաշվի առնվել, մասնավորապես նույնական իրավակարգավորում է նախատեսված երկու դատական մարմիններում: Ատենախոսի կարծիքով՝ Միջազգային քրեական դատարանի համար հատկապես ուղղորդող կարող է լինել տրիբունալների պրակտիկան մեղադրյալի տարբեր իրավունքների իրացման հարցերի շուրջ, քանի որ գործնականում մեղադրյալների համար նույնական իրավունքներ են սահմանված:

9. Ad hoc տրիբունալների դատական պրակտիկայի և տարբեր պետությունների ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ որոշակի դեպքերում տրիբունալի հանձնարարականները կարող են անմիջական գործողություն ունենալ պետությունների տարածքում և սովյալ պետության մեջ գտնվող անձանց համար անմիջականորեն առաջացնել պարտավորություններ: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նման պարտավորությունների խախտման համար սովյալ անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել ներպետական օրենսդրության հիման վրա:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության ընթացքում ձևավորված եզրահանգումներն ու հիմնական դրույթները կարող են օգտագործվել Միջազգային քրեական դատարանի հետ հարաբերություններում արտաքին քաղաքական կուրսի մշակման ժամանակ: Ատենախոսության որոշ դրույթներ կարող են օգտագործվել իրավապահ մարմինների կողմից Միջազգային քրեական դատարանի և ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների հետ համագործակցության և իրավական օգնության հարցեր առաջանալիս: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել Միջազգային քրեական դատարանին ՀՀ անդամակցության դեպքում համապատասխան օրենսդրական փոփոխություններ իրականացնելիս:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել տարբեր բուհերում հետազոտության առարկայի հետ առնչվող դասընթացների դասավանդման

ժամանակ, ինչպես նաև այլ գիտահետազոտական գործունեության ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որի նիստերի ընթացքում քննարկվել և գրախոսվել են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության տեսական եզրահանգումներն ու դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի թվով 4 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, 9 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի ու գրականության ցանկից:

II. Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվել են ատենախոսության թեմայի արդիակառուցությունը և արդյունքների գիտական նորոյթը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքը, հետազոտության նորմատիվ հիմքը, գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ներդրումը, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը**, որը վերտառված է «Միջազգային քրեական դատարանների հիմնադրման իրավական և պատմաքաղաքական ասպեկտները», բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում «Միջազգային մակարդակով քրեական արդարադատության իրականացման առաջին փորձերը» վերտառությամբ, ուսումնասիրվում է ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվության ենթարկելու գաղափարի սկզբնավորման և զարգացման պատմությունը: Ներկայացվում են միջազգային մակարդակով քրեական դատավարությունների իրականացման փորձերը փուլ առ փուլ՝ սկսած Պետեր ֆոն Հագենբախի դատավարությունից մինչև Սևրի և Վերսալի պայմանագրերով ստեղծվելիք միջազգային տրիբունալները: Ուսումնասիրվում են նաև նշված ժամանակաշրջաններում ընդունված միջազգային-իրավական այն փաստաթղթերը, որոնք թեև ուղակիորեն չէին նախատեսում ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվություն, բայց ակնառու նշանակություն ունեցան նշված գաղափարի արմատավորման համար: Վերլուծության առարկա են դարձել Սևրի և Վերսալի պայմանագրերի համապատասխան դրույթները միջազգային տրիբունալներ ստեղծելու վերաբերյալ: Մանավորապես, Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածի վերլուծության հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ հատուկ տրիբունալ ստեղծելու մասին նշված դրույթի կյանքի կոչվելու դեպքում այն միջազգային-իրավական պրակտիկայում կդառնար առաջին օրինակը, երբ կստեղծվեր միջազգային քրեաարդարադատական կառուցակարգ, որում հստակ սահմանված կլինեին դատարանի նյութական, տարածքային, ժամանակային և անձնական իրավագործությունները: Ընդ որում, պայմանագիրը ստորագրողները առաջին հերթին նկատի ունեին 1915-1918թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված անասելի վայրագությունները և ցեղասպանությունը հայ ժողովրդի նկատմամբ: Հեղինակը մատնանշում է Վերսալի և Սևրի պայմանագրերում միջազգային քրեական արդարադատության հիմնարար գաղափարների ամրագրման կարևորությունը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալները և նրանց հիմնարար դերը միջազգային քրեական արդարադատության զարգացման գործում» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում Երկրորդ համաշխարհային պատերազմում գերմանական և ճապոնական զլխավոր ռազմական հանցագործներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար ստեղծված Նյուրնբերգի և Տոկիոյի միջազգային ռազմական տրիբունալների հիմնադրման իրավական հիմքերը, դրանցում առկա դատավարական ընթացակարգերը, մատնանշվում են եղած թերությունները, ուսումնասիրվում է նշված տրիբունալների ունեցած ազդեցությունը ընդհանուր միջազգային իրավունքի և միջազգային քրեական իրավունքի առաջադիմական զարգացման վրա: Հեղինակը, համադրելով տրիբունալներում առկա մոտեցումները ընթացակարգային և ապացուցողական հարցերի վերաբերյալ գրականության մեջ արտահայտված կարծիքների հետ, եզրահանգում է, որ թեև տրիբունալների դատավարական ընթացակարգերը մարդու իրավունքների միջազգային-իրավական պաշտպանվածության ներկայիս պայմաններում կհամարվեին անթույլատրելի, այդուհանդերձ տրիբունալներում մեղադրյալները օժտված էին որոշակի իրավական ռեսուրսներով, որոնք այդ ժամանակաշրջանում աշխարհի շատ երկրների քրեադատավարական օրենքներում նույնիսկ բացակայում էին: Հեղինակը կարևորում է հատկապես այն հսկայական ազդեցությունը, որը տրիբունալները ունեցան միջազգային քրեական իրավունքի զարգացման գործում: Գործնականում առաջին անգամ այս տրիբունալների կանոնադրություններում ամրագրվեց «ըստ միջազգային իրավունքի հանցագործությունների (crimes under international law) կոնցեպցիան, և հստակ տրվեց նշված արարքների նկարագրությունները»: Սահմանելով միջազգային քրեական իրավունքի նյութաիրավական նորմերը՝ այս տրիբունալները անհրաժեշտ նախահիմք հանդիսացան ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի ստեղծման համար:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի հիմնադրումը՝ որպես միջազգային քրեական արդարադատության զարգացման նոր փուլ» վերտառությամբ, ուսումնասիրվում է Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալների, ինչպես նաև Միջազգային քրեական դատարանի հիմնադրման միջազգային-իրավական ասպեկտները, նշված դատական մարմինների կառուցվածքային առանձնահատկությունները: Քննարկման առարկա է դառնում ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևի հիման վրա ստեղծվելու իրավաչափության հարցը: Հեղինակը, համադրելով ՄԱԿ-ի Միջազգային դատարանի և Նախկին Հարավսլավիայի տրիբունալի իրավական դիրքորոշումները նշված հարցի վերաբերյալ, եզրահանգում է, որ «ենթադրյալ իրավագործությունների» կոնցեպցիան, որը դրվեց նման որոշման հիմքում, չի հակասում ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին: Հեղինակի կողմից հանգամանորեն ներկայացվում է նաև Միջազգային քրեական դատարանի 1998թ. հուլիսի 17-ի Հռոմի կանոնադրության մշակման և ընդունման ընթացքը: Այս պարագրաֆում հեղինակն անդրադառնում է էիբրիդ դատարանների հիմնադրման և գործունեության առանձնահատկություններին: Հեղինակը եզրակացնում է, որ այս դատարանները չպետք է դասվեն մի շարքում ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի հետ, քանի որ որևէ դատարանին միջազգային մակարդակով քրեական արդարադատություն իրականացնող մարմինների շարքում

դասելու համար անհրաժեշտ է ոչ այնքան վերջինիս կառուցվածքային բաղադրիչներում միջազգային պաշտոնատար անձանց առկայությունը, որքան տվյալ դատական ատյանի ընթացակարգային գործունեության կարգավորումը միջազգային-իրավական փաստաթղթերով, դատարանի նյութական իրավագործության հիմքը կազմող արարքների ըստ միջազգային իրավունքի սահմանված լինելը, ինչպես նաև ազգային դատական ատյանների հետ փոխհարաբերությունների հատուկ ընթացակարգ ունենալը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝ «Միջազգային քրեական դատարանների ընթացակարգային գործունեության իրավական կարգավորումը»** վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Գործերի հարուցման կառուցակարգերը Միջազգային քրեական դատարանում» վերտառությամբ, հանգամանորեն վերլուծության են ենթարկվում Միջազգային քրեական դատարանում գործերի հարուցման վերաբերյալ գործող տարբեր կառուցակարգերը: Քննարկման առարկա են դառնում Հռոմի կանոնադրության դեռևս ուժի մեջ չմտած 15bis հոդվածի դրույթները, որով սահմանվում է դատարանի իրավագործությունը ազդեցիկի հանցագործության նկատմամբ: Հեղինակը նշված հոդվածի դրույթները վերլուծում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և Միջազգային քրեական դատարանի փոխհարաբերությունների համատեքստում՝ փորձելով վեր հանել առկա իրավակարգավորման թերությունները: Համադրելով գրականության մեջ արտահայտված տարբեր կարծիքները՝ հեղինակը եզրակացնում է, որ ազդեցիկի հանցագործության դեպքում անհրաժեշտ է նախ հավաստել կոնկրետ պետության կողմից իրականացրած ազդեցիկի առկայության փաստը, որից հետո միայն այդ հաստատված փաստի հիման վրա առաջ քաշել կոնկրետ պատասխանատու անձանց միջազգային քրեական պատասխանատվության հարցը: Հեղինակը անդրադառնում է նաև դատախազի կողմից սեփական նախաձեռնությամբ հետաքննություն սկսելու որոշման դեպքում առկա իրավակարգավորումներին: Դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո հեղինակը պարզաբանում է քննության այս փուլի համար առանցքայի նշանակություն ունեցող «կատարված կամ կատարվող հանցագործությունների առկայության մասին ողջամիտ հիմք» և «արդարադատության շահեր» հասկացությունների բովանդակային սահմանները և կիրառումը Միջազգային քրեական դատարանի պրակտիկայում: Ներկայացվում են նաև պետության կողմից որոշակի իրավիճակ դատարանի քննությանը փոխանցելու, ինչպես նաև միակողմանի հայտարարության միջոցով դատարանի իրավագործությունը ճանաչելու դեպքերը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Գործերի քննության մինչդատական վարույթը միջազգային քրեական դատարաններում: Փոխլրացչության (կոմպլեմենտարիզմի) սկզբունքի գործողությունը և առկա խնդիրները» վերտառությամբ, վերլուծության են ենթարկվում ՄԱԿ-ի ad hoc տրիբունալներում և Միջազգային քրեական դատարանում գործերի քննության մինչդատական վարույթի փուլում առանձին դատավարական ընթացակարգերը, կասկածյալների և մեղադրյալների իրավունքների շրջանակը, դատախազի դատավարական կարգավիճակը: Քննարկվում է անձանց կալանավորման և միջազգային դատական ատյաններին փոխանցելիս պետությունների ինքնիշխանության ոտնահարման կամ մեղադրյալների հիմնարար իրավունքների խախտումների դեպ-

քերում միջազգային քրեական արդարադատության իրականացման հիմնահարցը: Հեղինակը նման իրավիճակները վերլուծում է՝ հաշվի առնելով պրակտիկայում առկա նախադեպերը և Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալների իրավական դիրքորոշումները: Հեղինակն անդրադառնում է նաև Միջազգային քրեական դատարանում գործող փոխլրացչության սկզբունքի գործողության առանձնահատկություններին: Մասնավորապես դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո բացահայտվում է «գործի հետաքննություն», «իրավագործություն ունեցող պետություն», «պետության ցանկության բացակայություն», «պետության անկարողություն», «պատշաճ կերպով», «գործի բավականաչափ լրջություն» հասկացությունների բովանդակային սահմանները և կիրառման պրակտիկան: Հեղինակը եզրակացնում է, որ դատախազական հայեցողության բացառման համար անհրաժեշտ է սահմանել «գործի բավականաչափ լրջություն» հասկացության որոշակի չափանիշների շրջանակ, որոնք անհրաժեշտ է կիրառել կախված կոնկրետ իրավիճակի հանգամանքներից: Հեղինակը արձանագրում է նաև այն փաստի կարևորությունը, որ ներպետական դատավարության ժամանակ Միջազգային քրեական դատարանը որոշակի մեխանիզմների միջոցով պետք է առավել ուշադրություն դարձնի մեղադրյալի իրավունքների պաշտպանության խնդիրներին:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Ղատական քննությունը միջազգային քրեական դատարաններում» վերտառությամբ, ուսումնասիրության առարկա են դառնում տրիբունալներում և Միջազգային քրեական դատարանում գործերի ղատական քննության փուլում առաջացող հիմնահարցերը: Մասնավորապես ներկայացվում է քրեական արդարադատության սկզբունքների մեկնաբանությունը և կիրառման առանձնահատկությունները վերոհիշյալ դատական մարմիններում: Հեղինակը, համեմատական վերլուծություն կատարելով տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի առանձին դատավարական ինստիտուտների և իրավակարգավորումների միջև և հենվելով գրականության մեջ արտահայտված կարծիքների վրա, եզրակացնում է, որ քրեական արդարադատության միջազգային մարմիններում առկա դատավարական կառուցակարգերը պարունակում են ինչպես ընդհանուր, այնպես էլ մայրցամաքային իրավական համակարգերին բնորոշ կարգավորումներ՝ հանդիսանալով ինքնատիպ՝ sui generis համակարգ: Անդրադարձ է կատարվում նաև ապացույցներին և ապացուցողական գործունեությանը վերաբերող նորմերին և դրանց վերաբերյալ առկա իրավական դիրքորոշումներին: Այս պարագրաֆում հեղինակը հանգամանորեն վերլուծում է նաև Միջազգային քրեական դատարանում գործերի քննությանը տուժողների մասնակցության հնարավորությունը՝ դատարանի իրավական դիրքորոշումների ներքո բացահայտելով Հռոմի կանոնադրության և Ընթացակարգի ու ապացուցման կանոնների համապատասխան հասկացությունների բովանդակությունը: Հեղինակը եզրահանգում է, որ միջազգային քրեական արդարադատությանը տուժողների մասնակցությունը և անմիջականորեն միջազգային դատական մարմնի որոշման հիման վրա փոխհատուցում ստանալու հնարավորությունը միջազգային քրեական արդարադատության առաջադիմական զարգացման լավագույն ապացույցներից է:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Վերաքննիչ քննությունը միջազգային քրեական դատարաններում» վերտառությամբ, քննարկվում է վերաքննիչ բողոքարկման առանձնահատկությունները և գործող ընթացակարգերը Միջազգային քրեական դատարանում՝ անդրադարձ կատարելով Նախկին Հարավսլավիայի

լավիայի և Ռուանդայի տրիբունալների պրակտիկային: Բացահայտվում են վերոհիշյալ դատական ատյաններում վերաքննիչ բողոքարկման հիմքերը և դրանց վերաբերյալ առկա իրավական դիրքորոշումները: Հեղինակը քննարկում է նաև Միջազգային քրեական դատարանում միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: Հեղինակը եզրահանգում է, որ դատարանի պրակտիկայի միատեսակության և իրավական որոշակիության պահպանման համար առավել նպատակահարմար է վերաքննիչ բողոքի ընդունելիությունը որոշելու կարողությամբ օժտել ոչ թե համապատասխան որոշումը կայացրած պալմատին, այլ վերաքննիչ պալմատին, որը առավել հաջողությամբ կարող է համապատասխան հանգամանքներում որոշել Հռոմի կանոնադրության 82-րդ հոդվածի 1-ին կետի d) ենթակետի դրույթների առկայությունը և իր հեղինակավոր մեկնաբանությունների միջոցով ձևավորել կայուն պրակտիկա: Նման իրավակարգավորումը կնպաստի դատարանի միջանկյալ դատական որոշումների քննության արդյունքում կանոնադրության և ընթացակարգի ու ապացուցման կանոնների ոչ միանշանակ ընկալվող դրույթների վերաբերյալ վերաքննիչ բաժանունքի հեղինակավոր իրավական դիրքորոշումների ի հայտ գալուն և դատարանի նախադեպային իրավունքի զարգացմանը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Միջազգային քրեական դատարանների ակտերը քրեական արդարադատության ժամանակակից հիմնախնդիրների լուծման գործիքակազմում» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Միջազգային քրեական դատարանների որոշումների իրավաբանական բնույթը և նախադեպային նշանակությունը» վերտառությամբ, վերլուծության առարկա է դառնում նախադեպի՝ որպես իրավունքի աղբյուրի դերը և նշանակությունը միջազգային քրեական արդարադատության բնագավառում: Հեղինակը սկզբում անդրադառնում է աշխարհի հիմնական իրավական ընտանիքներում նախադեպի կիրառությանը: Այնուհետև առկա պրակտիկայի հիման վրա ուսումնասիրվում է Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալներում դատական նախադեպերի կիրառության հիմնահարցերը: Հեղինակը ցույց է տալիս, որ տրիբունալները հենվում են նախկինում կայացրած իրենց որոշումների վրա՝ իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներից ելնելով, ինչպես նաև միասնական իրավակիրառ դաշտ ձևավորելու նկատառումներով: Քննարկման առարկա է դառնում նաև տրիբունալների որոշումների՝ Միջազգային քրեական դատարանի համար հնարավոր նախադեպային նշանակությունը: Հեղինակը եզրակացնում է, որ դատարանը ուղղակիորեն չի կարող հենվել տրիբունալների իրավական դիրքորոշումների վրա՝ որպես իրավունքի աղբյուրների, բայց կարող է օգտվել նման դիրքորոշումներից, եթե քննարկվող հարցի վերաբերյալ նույնանման իրավակարգավորումներ են նախատեսված և, տրիբունալներում, և, Միջազգային քրեական դատարանում՝ նամանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրիբունալների կանոնադրությունները և ընթացակարգի ու ապացուցման կանոնները, ինչպես նաև դատական պրակտիկան ուղղորդիչ նշանակություն են ունեցել Միջազգային քրեական դատարանի հիմնադիր փաստաթղթերի մշակման ժամանակ:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Միջազգային քրեական դատարանների որոշումների կատարման առանձնահատկությունները» վերտառությամբ, քննարկման առարկա է դառնում միջազգային մակարդակով քրեական

արդարադատություն իրականացնող մարմինների և պետությունների փոխհարաբերությունների հիմնահարցը: Հեղինակը հստակ տարանջատում է կատարում ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի առջև պետությունների ունեցած պարտավորությունների միջև՝ որպես փաստարկ մատնանշելով այդ մարմինների՝ միջազգային-իրավական տարբեր ուժ ունեցող փաստաթղթերի հիման վրա ստեղծվելու փաստը: Անդրադառնալով պետությանը հասցեագրված հրամանների և խնդրանքների ներպետական իմպլեմենտացման խնդիրն՝ հեղինակը գտնում է, որ պետությունները լիակատար հայեցողություն ունեն որոշելու այն մարմինների և պաշտոնատար անձանց ցանկը, ովքեր պատասխանատու են տվյալ որոշման կատարման համար: Հեղինակն այս պարագրաֆում անդրադառնում է նաև միջազգային քրեաարդարադատական նորմերի և պետությունների գլոխների անձեռնմխելիությունների վերաբերյալ միջազգային-իրավական նորմերի հարաբերակցության խնդիրներին: Կարևորվում է այն գաղափարը, որ անձեռնմխելիությունների մասին միջազգային-իրավական նորմերը չպետք է խանգարեն պետություններին ներպետական մակարդակում իրականացնելու նման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ միջազգային քրեական դատարանի որոշման հիման վրա կիրառվող հարկադրական միջոցները, եթե այդ միջոցները ուղղված են միջազգային դատական մարմնի առջև տվյալ անձի պատասխանատվությունը ապահովելուն: Հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվում միջազգային դատական մարմինների հետ համագործակցության մասին տարբեր պետությունների ներպետական օրենսդրությունը, որի հիման վրա կատարվում են տեսական եզրահանգումներ:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության առարկայի ուսումնասիրության արդյունքում հեղինակի կատարած հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածով նախատեսված դրույթը հատուկ տրիբունալի ստեղծման մասին պետք է դիտարկել միջազգային-իրավական առաջին նորմը, որով նախատեսվում էր ստեղծել հատուկ տրիբունալ՝ նյութական, ժամանակային, տարածքային, անձնական իրավագործությունների հստակ սահմանմամբ: Ընդ որում, պայմանագրի ստորագրմանը նախորդած քննարկումների վերլուծությունները ատենախոսին թույլ են տալիս եզրակացնել, որ նշված հոդվածում խոսքը առաջին հերթին գնում էր Հայոց ցեղասպանության մասին: Դեռևս 1920թ. հայկական կոտորածների վերաբերյալ նշված դրույթի իրավա-պայմանագրային ձևակերպումը ևս կարող է կարևոր կթվան հանդիսանալ թուրքական մերժողականության հաղթահարման ճանապարհին:

2. Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի ad hoc տրիբունալների հիմնադրումը ՄԱԿ-ի Աև կողմից՝ ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ հոդվածի ընդլայնված մեկնաբանության հիման վրա, պետք է դիտարկել ոչ թե լիազորությունների գերազանցում, այլ անհրաժեշտ և ժամանակին կատարված քայլ՝ ելնելով արդարադատության շահերից, նամանավանդ որ ՄԱԿ-ի մարմինների ենթադրյալ լիազորությունների կոնցեպցիան կանոնադրությանը հակասող չի ձանաչվել Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունների մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներում:

3. Միջազգային քրեական դատարանի հիմնադրումը նշանավորեց որակապես նոր փուլ միջազգային քրեական իրավունքի և միջազգային քրեական արդարադատության բնագավառում: Վերջինիս գործունեությունն արդեն ուղղ-

ված է ոչ միայն որոշակի հանցանքներ գործած անձանց նկատմամբ պատժիչ գործառույթի իրականացմանը, այլ նաև մեղադրյալի միջազգային իրավունքով երաշխավորված իրավունքների ամրագրմանը և կենսագործմանը, արդար և անկողմնակալ դատաքննության ապահովմանը: Միջազգային քրեական իրավունքից առանձնանում է միջազգային քրեական արդարադատությունը որպես միջազգային քրեական դատարանների՝ որոշակի կատեգորիաների գործերի լուծման, այդ ընթացքում պետությունների հետ դատարանների հարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմերի ամբողջություն, որն ամբողջովին հիմնված է մեղադրյալի միջազգային իրավունքով երաշխավորված իրավունքների պաշտպանության և արդար դատաքննության սկզբունքների վրա:

4. Կանոնադրության 8bis հոդվածով ազրեսիայի հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն այն անձը, ով իր պաշտոնական դիրքի շնորհիվ ի վիճակի է արդյունավետ վերահսկողություն իրականացնել կամ ուղղորդել պետության քաղաքական կամ ռազմական այն գործողությունները, որոնք կազմում են ազրեսիայի հանցակազմը: Ընդ որում, հանցագործության սուբյեկտ կարող են լինել միայն քաղաքական կամ ռազմական ամենաբարձր պաշտոններ զբաղեցնել անձինք: Հետևաբար, ազրեսիայի հանցագործությունը ենթադրում է տվյալ պետության կողմից ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու միջազգային-իրավական պարտավորության խախտման վկայություն և տվյալ պետության նկատմամբ ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ և 42-րդ հոդվածներով նախատեսված հարկադրական միջոցների կիրառում: Ատենախոսի կարծիքով, նման կապը ենթադրում է, որ ազրեսիայի հանցագործության դեպքում անհրաժեշտ է նախ հավաստել կոնկրետ պետության կողմից իրականացրած ազրեսիայի առկայության փաստը, որից հետո միայն այդ հաստատված փաստի հիման վրա առաջ քաշել կոնկրետ պատասխանատու անձանց միջազգային քրեական պատասխանատվության հարցը:

5. Գործի «բավականաչափ լրջություն» հասկացության գնահատման հստակ չափանիշների անհրաժեշտության հարցը վիճելի է: Այնուամենայնիվ նշենք, որ անհրաժեշտ է սահմանել չափանիշների որոշակի շրջանակ, որոնք անհրաժեշտ է կիրառել կախված իրավիճակի կոնկրետ հանգամանքներից, ինչը կսահմանափակի դատախազական հայեցողության շրջանակը: Կարևոր է նաև դատախազի գրասենյակի կողմից հստակ և պատճառաբանված տեղեկատվության տրամադրումը շահագրգիռ կողմերին հետաքննություն սկսելու կամ չսկսելու որոշում կայացնելիս:

6. Գրականության մեջ գերիշխող կարծիքների, ինչպես նաև դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն՝ փոխլրացության սկզբունքից բխում է, որ դատարանը կարող է միջամտել ներպետական դատավարության ընթացքին միայն այն դեպքում, երբ վերջինիս ընթացքում առկա մեղադրյալի իրավունքների խախտումները վկայում են վերջինիս նկատմամբ արդարադատություն չիրականացնելու մտադրության մասին: Սակայն կանոնադրության համապատասխան դրույթների վերլուծությունից և արդարադատության շահերից բխում է, որ դատարանը պետք է ընդլայնի իր հնարավորությունները այս հարցում: Ուստի առաջարկվում է կանոնադրության 17-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ պատշաճ կերպով հետաքննություն իրականացնելու պետության անկարողությունը բացահայտող նորմը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «...անկարողության առկայությունը բացահայտելու նպատակով դատարանը հաշվի է առնում, թե արդյոք ներպետական դատավարության ընթաց-

քում թույլ չեն տրվել մեղադրյալի՝ միջազգային-իրավական նորմերով ճանաչված դատավարական իրավունքների այնպիսի կոպիտ և սխտեմատիկ խախտումներ, որոնց արդյունքում կայացված դատական ակտը խախտում է արդարադատության բուն էությունը»:

7. Գործերի դատական քննությունը կարգավորող նորմերի վերլուծությունը, ինչպես նաև դրանց կիրառման պրակտիկան մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ այն պարունակում է ինչպես ընդհանուր, այնպես էլ մայրցամաքային իրավական համակարգերին բնորոշ կարգավորումներ՝ հանդիսանալով ինքնատիպ՝ sui generis համակարգ:

8. Դատաքննության ընթացքում մեղադրյալի համար գործնականում երաշխավորված են մարդու իրավունքների միջազգային-իրավական նորմերով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բոլոր բաղադրիչները:

9. Միջազգային քրեական դատարանի և տրիբունալների ընթացակարգերի կարևոր տարբերություններից է դատարանում համապատասխան պայմանների բավարարման դեպքում տուժողների՝ որպես ինքնուրույն դատավարական սուբյեկտների հանդես գալու և փոխհատուցում ստանալու հնարավորությունը:

10. Միջազգային քրեական դատարանի պրակտիկայի միատեսակության և իրավական որոշակիության պահպանման համար առավել նպատակահարմար է միջանկյալ դատական որոշումների դեմ վերաքննիչ բողոքի ընդունելիությունը որոշելու կարողությամբ օժտել ոչ թե համապատասխան որոշումը կայացրած պալատին, այլ վերաքննիչ պալատին, որը առավել հաջողությամբ կարող է համապատասխան հանգամանքներում որոշել կանոնադրության 82-րդ հոդվածի 1-ին կետի d) ենթակետի դրույթների առկայությունը և իր հեղինակավոր մեկնաբանությունների միջոցով ձևավորել կայուն պրակտիկա: Նման իրավակարգավորումը կնպաստի դատարանի միջանկյալ դատական որոշումների քննության արդյունքում կանոնադրության և ընթացակարգի ու ապացուցման կանոնների ոչ միանշանակ ընկալվող դրույթների վերաբերյալ վերաքննիչ բաժանմունքի հեղինակավոր իրավական դիրքորոշումների ի հայտ գալուն և դատարանի նախադեպային իրավունքի զարգացմանը:

11. Թեև դատական նախադեպը ուղղակիորեն չի հանդիսանում իրավունքի աղբյուր Միջազգային քրեական դատարանում, սակայն իրավական որոշակիության և կայունության պահանջներից ելնելով, տրամաբանական չի լինի, որ դատարանը որոշակի գործերով իրավական նորմերն ու սկզբունքները մեկնաբանի և կիրառի այլ կերպ, քան կիրառել էր իր նախորդ որոշումներում, եթե այդպես վարվելու համար ծանրակշիռ հիմքեր չկան: Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի ad hoc տրիբունալների որոշումների՝ Միջազգային քրեական դատարանի համար նախադեպային նշանակությանը, ապա վերջինս ուղղակիորեն չի կարող հենվել տրիբունալների նախադեպերի վրա, բայց, այնուամենայնիվ, որոշակի հարցի վերաբերյալ տրիբունալների վերաքննիչ պալատի իրավական դիրքորոշումները կարող են դատարանում նույն հարցի քննարկման ժամանակ հաշվի առնվել, մասնավորապես եթե նույնական իրավակարգավորում է նախատեսված երկու դատական մարմիններում: Միջազգային քրեական դատարանի համար հատկապես ուղղորդող կարող է լինել տրիբունալների պրակտիկան մեղադրյալի տարբեր իրավունքների իրացման հարցերի շուրջ, քանի որ գործնականում մեղադրյալների համար նույնական իրավունքներ են սահմանված:

12. Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալների հիմնադրումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից՝ կանոնադրության 7-րդ գլխի 41-րդ - հոդվածի հիման վրա օժտում է տրիբունալներին այն առավելությամբ, որ ՄԱԿ

անդամ բոլոր պետությունները իրավաբանորեն պարտավորվում են կատարել վերջիններիս համագործակցության խնդրանքները, ինչը բխում է Աև համապատասխան բանաձևերից և ՄԱԿ-ի կանոնադրության 25-րդ հոդվածից:

13. Տրիբունալների կանոնադրությունների և դատական պրակտիկայի, ինչպես նաև ընդհանուր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների ուսումնասիրությունը վկայում է, որ տրիբունալների համագործակցության խնդրանքները և իրամասները չպետք է ուղղակիորեն հասցեագրվեն պետությունների պաշտոնատար անձանց, այլ պետություններին, ովքեր իրավասու են ներպետական մակարդակում որոշելու այն անձանց շրջանակը, ովքեր պատասխանատու են նշված խնդրանքների իրականացման համար:

14. Հռոմի կանոնադրության մասնակից պետությունները պարտավոր են անշեղորեն կատարել կանոնադրության պահանջները միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքին համապատասխան: Կանոնադրությանը մասնակից չհանդիսացող պետությունների համար կարող են առաջանալ դատարանի հետ համագործակցելու միջազգային-իրավական պարտավորություններ՝ դատարանի հետ ad hoc համաձայնագրի ստորագրման, ինչպես նաև Աև կողմից դատարանին իրավիճակի ներկայացման դեպքում, եթե համապատասխան բանաձևով իմպերատիվ կերպով նախատեսվի պետությունների համագործակցելու պարտավորությունը՝ անկախ կանոնադրությանը մասնակից լինելու հանգամանքից:

15. Միջազգային քրեական արդարադատության արդյունավետության և հանցանքներ գործած անձանց պատժի անխուսափելիության նպատակների իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի միջպետական հարաբերություններում ամրագրվի այն սկզբունքը, որի համաձայն անձեռնմխելիությունների մասին միջազգային-իրավական նորմերը չպետք է խանգարեն պետություններին ներպետական մակարդակում իրականացնելու նման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ միջազգային քրեական դատարանի որոշման հիման վրա կիրառվող հարկադրական միջոցները, եթե այդ միջոցները ուղղված են միջազգային դատական մարմնի առջև տվյալ անձի պատասխանատվությունը ապահովելուն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մկրտչյան Մ., «Դատական նախադեպը և միջազգային քրեական դատարանների արդարադատական գործառույթների արդյունավետության հիմնախնդիրը», «Բանբեր Երևանի համալսարանի (իրավագիտություն)», 141.3, 2013թ., էջեր 66-76:

2. Մկրտչյան Մ., «Միջազգային քրեական դատարանների որոշումների կատարման միջազգային-իրավական երաշխիքները», «Պետություն և իրավունք», Երևան, 2014թ., թիվ 1 (63), էջեր 146-159:

3. Մկրտչյան Մ., «Փոխլրացչության (կոմպլեմենտարիզմի) սկզբունքի էութունը և գործողությունը Միջազգային քրեական դատարանի պրակտիկայում», «Դատական իշխանություն», Երևան, 2014թ., թիվ 12 (183), էջեր 34-39:

4. Մկրտչյան Մ., «Միջազգային քրեական դատարանի իրավագրության իրականացումը ագրեսիայի հանցագործության նկատմամբ», «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նյութերի ժողովածու», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015թ., էջեր 489-498:

МКРТЧЯН МГЕР ВАЧАГАНОВИЧ

ОСОБЕННОСТИ ПРАВОСУДНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МЕЖДУНАРОДНЫХ УГОЛОВНЫХ СУДОВ И ПРЕЦЕДЕНТНОЕ ЗНАЧЕНИЕ ИХ АКТОВ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена вопросам создания, поступательного развития международных уголовных судов, раскрытию проблем, возникающих в процессе их сегодняшней деятельности, выработке и предложению путей их решения. Рассматривается также возможное прецедентное значение актов вышеупомянутых судов для развития международного уголовного правосудия. обстоятельно проанализировав особенности деятельности международных уголовных судебных органов на различных исторических этапах, автор подчеркивает поступательный характер их развития. Проведя сравнительный анализ разных судебных органов, автор приходит к выводу, что созданные в более ранний период международные уголовные суды сыграли решающую роль в учреждении и деятельности судов, созданных впоследствии. Автор, изучив также особенности создания и функционирования так называемых гибридных судов, приходит к выводу, что не существует достаточных оснований для причисления этих инстанций к ряду международных уголовных судов.

Автор анализирует пока еще не вступившую в силу статью 15bis Римского статута Международного уголовного суда и приходит к выводу о том, что установленные указанной статьей нормы, определяющие юрисдикцию Международного уголовного суда в отношении преступления агрессии, нуждаются в некоторой редакции – с целью исключения возможных разночтений с соответствующими положениями Устава ООН.

Автором анализируются нормы Римского статута, устанавливающие принцип комплементаризма, действующий в Международном уголовном суде, и практика применения этих норм. Анализируются также комментарии МУС относительно соответствующих положений Статута. Автор приходит к выводу, что для достижения поставленных целей было бы более эффективным, если бы МУС уделял большее внимание обеспечению прав обвиняемых в национальных судебных инстанциях.

Автором проведен сравнительный анализ процессуальных регламентов, действующих в трибуналах по бывшей Югославии и по Руанде и в международных уголовных судах. Автор уделяет внимание правовым позициям данного судебного органа относительно того или иного процессуального института, а также мнениям, выраженным в литературе.

Автором затрагивается вопрос применения прецедента в сфере международного уголовного правосудия в качестве источника права. Рассмотрев правовые позиции разных судебных органов и выраженные в литературе точки зрения, автор приходит к выводу, что МУС не может прямо опираться на прецеденты трибуналов, но, тем не менее, правовые позиции Апелляционной палаты трибуналов относительно определенного вопроса могут быть учтены при рассмотрении в Суде аналогичного вопроса, особенно если в обоих судебных органах предусмотрено одинаковое праворегулирование. По мнению диссертанта, ориентиром для МУС может быть, в частности, практика трибуналов в вопросах осуществления различных прав обвиняемого, поскольку для них предусмотрены практически одинаковые права.

Автор рассматривает также проблемы, возникающие в процессе выполнения решений и просьб, адресованных государствам международными уголовными судами. Анализируются устанавливающие ответственность глав государств и касающиеся их иммунитета международно-правовые нормы. В частности, автор затрагивает вопрос правомерности выданного Международным уголовным судом ордера на арест Омара аль-Башира, а также обязательства третьих стран по приведению его в исполнение. Автор заключает, что в любом случае приоритет должен принадлежать идее неотвратимости наказания.

Автор касается также процедур выполнения предписаний трибуналов, адресованных физическим лицам. Основываясь на правовых позициях трибуналов, а также на анализе национальных законодательств разных государств, автор приходит к выводу, что в определенных случаях предписания трибунала могут обладать непосредственным действием на территории государства и вызывать прямые обязательства для лиц, находящихся внутри этой страны.

MHER VACHAGAN MKRTCHYAN

THE FEATURES OF THE JUDICIAL ACTIVITIES OF THE INTERNATIONAL CRIMINAL COURTS AND THE PRECEDENTIAL IMPORTANCE OF THEIR JUDICIAL ACTS

SUMMARY

The thesis is dedicated to the identification of the core problems arising during the establishment, gradual development and current activity of the international criminal courts, and the development of solutions to the above-mentioned issues. The meaning of possible case precedents of the above-mentioned courts in the field of the international criminal justice development is also discussed. The author gives a detailed analysis of the peculiarities of the actions in the international criminal judicial bodies in various historical periods and highlights the gradually developing nature of the international criminal courts. After having carried out comparative analysis between different judicial bodies, the author concludes, that early international criminal courts had crucial role in the establishment and functioning of the courts that were founded later. The author has also studied the peculiarities of the establishment and functioning of the so-called hybrid courts, concluding that there are no sufficient grounds to put the mentioned courts in the same row as the international criminal courts.

The author analyzes the 15bis Article of the Rome Statute of the ICC, which has not been enforced yet, and concludes, that according to the given Article, the norms of the ICC that define the equality towards the aggression as a crime need certain revision in accordance with the provisions of the UN Charter to rule out any plausible misreading.

The author analyzes the corresponding norms of the Rome Statute that define the principle of complementarity operating in the ICC and the practice of their usage. The ICC comments about the corresponding provisions of the Statute are also analyzed. The author concludes that it would be more effective for the ICC to pay special attention to ensuring the rights of the accused in domestic courts to implement its goals. The author carries out a comparative analysis of judicial procedures in the former Yugoslavia and Rwanda tribunals and the ICC. The author pays attention to the legal positions of the given judicial bodies, as well as the opinions expressed in the literature regarding this or that judiciary institution.

The author refers to the precedent in the field of the international criminal justice as a law enforcement source. Referring to the legal positions of various judicial bodies and opinions expressed in the literature, the author concludes that the ICC cannot just rely on the precedents of tribunals, but the legal positions of the Tribunals' Appeal's Chamber about a certain issue may be taken into account

in the court when discussing the same issue, especially if in the two judicial bodies the identical legal regulation is expected. According to the author, the ICC can especially take into consideration the practice of the tribunals regarding the implementation of various rights of the accused, because practically the accused have identical rights.

The author also refers to the core problems that arise during the implementation of the decisions and requests addressed to the states by the international criminal courts. The international-legal norms that define the responsibilities of the states' heads and norms about their inviolability are also analyzed. In particular, the author refers to the legality of Omar Al- Bashir's arrest sanction issued by the ICC, as well as the obligations of the third countries regarding its implementation. The author comes to the conclusion, that in any case, the idea of the inevitable punishment should have priority.

The author also refers to the procedure of implementing the decrees directed to the individuals by the tribunals. Based on the legal positions of the tribunals, as well as on the analysis of domestic legislation in different countries, the author concludes that, in certain cases, the recommendations of the tribunal may have direct action in the territory of the countries and directly bring forward obligations for the people in that country.